Արձանագրություն N 4

ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/9 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

15 հունվարի 2026թ.
ժամը՝ 10:30

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան, Տ.Ղազարյան, Վ.Քեռյան, Տ.Բաղալյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

*Նիստից բացակայում են Վազգեն Քեռյանը և Տիգրան Բաղալյանը

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին

1.1 Նիստը վերսկսվեց 15.01.2026 թվականին: Հանձնաժողովն արձանագրեց, որ ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ն, «ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ-ն, ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ն, Տիգրան Անանյան Հրանտի ԱՁ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ի, Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ-ի , Ընթացակարգի 11-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Տիգրան Անանյան Հրանտի» Ա/Ձ-ի, Ընթացակարգի 15-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ -ի հայտերը գնահատել բավարար:

1.2 Հանձնաժողովն արձանագրեց, որ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Սոֆթ Թրեյդ ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման համար հրավերով նախատեսված կարգով և ժամկետում eauction.armeps.am համակարգում կցվել է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության՝ (Հավելված 1) շտկված տարբերակը, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ Հավելված 1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ((Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը իր կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում և ներկայացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:(....): Գնահատող հանձնաժողովի կողմից **https://ekeng.am/hy/sec_sub/sign_check** գործիքի միջոցով իրականացված ստուգման արդյունքում պարզվել է, որ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը ստորագրություն չի պարունակում:)):

Հանձնաժողովը որոշեց, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, Սոֆթ Թրեյդ ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժիններով գնահատել անբավարար ու մերժել վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման, Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու վերաբերյալ

15.01.2026թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ին Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով, «ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով, «Տիգրան Անանյան Հրանտի» Ա/Ձ-ին Ընթացակարգի 11-րդ չափաբաժնով, ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ին Ընթացակարգի 15-րդ չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակիցներ, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2 Հաստատել Ընթացակարգի 3-րդ, 5-րդ, 11-րդ, 15-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին որոշման և Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստերը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում Ընթացակարգի 3-րդ, 5-րդ, 11-րդ, 15-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու որոշման մասին և Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

2.5 Ընթացակարգի 4-րդ չափաբաժնով հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գները աճուրդն ամփոփելու պահին գերազանցել են Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գինը, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

2.6 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ *Վարդան Հարությունյան*

անդամներ՝ _____ *Վարդան Թորոսյան*

_____ *Տիգրան Ղազարյան*

քարտուղար՝ _____ *Հերմինե Սաղաթելյան*